Հավելված

Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի
որակավորման հանձնաժողովի
04.03.2026թ. որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ (ՔՆՆԻՉՆԵՐԻ) ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԽՄԲԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների 2026 թվականի ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիր) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ քննիչի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը: Մասնագիտական պատրաստման գործընթացը նպատակաուղղված է ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերի, ՀՀ քրեական դատավարության արդի հարցերի, քրեագիտական տակտիկայի և մեթոդիկայի, փորձաքննությունների արդի հնարավորությունների և արդյունավետ հաղորդակցման հմտությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

3. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

4. Դասընթացների ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 104 ակադեմիական ժամ և 6 ակադեմիական ժամ քննաշրջանի համար: Ուսումնառությունն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

1. Ուսումնառության ընդհանուր տևողությունը Ծրագրով սահմանված ուսումնառության ժամանակացույցի համաձայն սահմանվում է հետևյալ կերպ. երրորդ խումբը՝ 2026 թվականի ապրիլի 27-ից հուլիսի 8-ը, չորրորդ խումբը՝ 2026 թվականի հուլիսի 6-ից սեպտեմբերի 17-ը:

2. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ: Փորձաշրջանի ընդհանուր տևողությունը մեկ ամիս է: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր ունկնդիր գնահատվում է դրական կամ բացասական:

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3-ՐԴ ԽՈՒՄԲ

	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի տևողություն	Ընդհանուր ժամաքանակ (տևողություն)
Ուսուցման 1-ին հատված (ապրիլի 27–հունիս 5)	**104 ժամ** (5 դասընթաց) (ապրիլի 27 – մայիսի 22)	**6 ժամ** (2 քննություն) (մայիսի 25-հունիսի 5)		**110 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (հունիսի 8–հուլիսի 8)			**1 ամիս** (հունիսի 8 – հուլիսի 8)	**1 ամիս**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**104 ժամ**	**6 ժամ**	**1 ամիս**	**110 ժամ և 1 ամիս**

4-ՐԴ ԽՈՒՄԲ

	Դասընթացների ժամաքանակ	Քննաշրջանի ժամաքանակ	Փորձաշրջանի տևողություն	Ընդհանուր ժամաքանակ (տևողություն)
Ուսուցման 1-ին հատված (հուլիսի 6–օգոստոսի 14)	**104 ժամ** (5 դասընթաց) (հուլիսի 6 – հուլիսի 31)	**6 ժամ** (2 քննություն) (օգոստոսի 3 – օգոստոսի 14)		**110 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (օգոստոսի 17-սեպտեմբերի 17)			**1 ամիս** (օգոստոսի 17-սեպտեմբերի 17)	**1 ամիս**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**104 ժամ**	**6 ժամ**	**1 ամիս**	**110 ժամ և 1 ամիս**

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	IC-C-001-26	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	40
2.	IC-C-002-26	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	40
3.	IC-C-003-26	Քրեագիտական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցեր	10
4.	IC-C-004-26	Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները	6
5.	IC-C-005-26	Արդյունավետ հաղորդակցման հմտություններ, վարքագծի կանոնների պահպանում	8

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. IC-C-001-26. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացի շրջանակում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-C-002-26 դասընթացի հետ համատեղ:

2. IC-C-002-26. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացի շրջանակում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-C-001-26 դասընթացի հետ համատեղ:

3. IC-C-003-26. Քրեագիտական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեագիտական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դեպքի վայրի զննության տակտիկան,
- առանձին քննչական գործողությունների (քննչական փորձարարություն, ճանաչման ներկայացնել, խուզարկություն և այլն) տակտիկան,
- հարցաքննության տակտիկական մեթոդներն ու առանձնահատկությունները,
- քննչական վարկածը և քննության պլանավորումը,
- հանցագործության մեխանիզմի հասկացությունը,
- քրեագիտական նույնականացման հասկացությունը,
- քրեագիտական դիագնոստիկայի հասկացությունը,
- ապացույցների ամրագրման տեխնիկա-քրեագիտական մեթոդները և ձևերը,
- քրեագիտական լուսանկարահանումն ու տեսաձայնագրումը,
- առանձին հանցագործությունների քննության մեթոդիկան:

Դասընթացի շրջանակում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-C-004-26 և IC-C-005-26 դասընթացների հետ համատեղ:

4. IC-C-004-26. Փորձագիտական գործունեությունը և դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները

Դասընթացը պայմանավորված է փորձագիտական գործունեության և փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները,
- փորձագիտական գործունեությունը և դրա առանձնահատկությունները,
- քրեական վարույթում փորձաքննությունների (դատաբժշկական, դատաձեռագրաբանական, փաստաթղթաբանական և այլ) ժամանակակից հնարավորությունները, դրանց նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, փորձաքննությունների կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-C-003-26 և IC-C-005-26 դասընթացների հետ համատեղ:

5. IC-C-005-26. Արդյունավետ հաղորդակցման հմտություններ և վարքագծի կանոնների պահպանում

Դասընթացն անհրաժեշտ է Ունկնդիրներին իրենց պաշտոնեական գործառույթների արդյունավետ իրականացման կարևոր գրավական հանդիսացող հաղորդակցությունների վերաբերյալ բազային գիտելիքների ձեռքբերման համար: Նշվածը թույլ կտա ձևավորել կառուցողական փոխհարաբերություններ և կանխել հնարավոր ռիսկերը պաշտոնեական և ոչ պաշտոնեական գործունեության ընթացքում: Ծանոթացնել ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի կանոնների վարվելակերպի և փոխհարաբերությունների առանձնահատկություններին:

Դասընթացը ներառում է հաղորդակցության էությունը և տեսամեթոդական հիմքերը, հաղորդակցության արգելքները և դրանց հաղթահարման ուղիները, մանիպուլյացիան և

հակամանիպուլյացիայի միջոցները, հանրության, պաշտոնատար անձանց և զանգվածային լրատվության միջոցների հետ հաղորդակցության, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի իրավունքների, պարտականությունների, վարքագծի սկզբունքների, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումների առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-C-003-26 և IC-C-004-26 դասընթացի հետ համատեղ: